4179

Պրոլետարներ բոլոր երկրների միացեք։

ՎԱՏԻՆ

ԻՆՉ ԲԱՆ Է ԿՈՄՄՈՒՆԱՆ

Թարգմ. Ե.-ի

ЭК7
Ч-28

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
1918 թ.

3K7
Ա-28

0 1 JUL 2005

Պրոլետարներ բոլոր երկրների միացէք։

1 DEC 2009

ՎԱՏԻՆ

ԻՆՉ ԲԱՆ Է ԿՈՄՄՈՒՆԱՆ

Թարգմ. Ե.-ի

4856

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
1918 թ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
Им. А. Мясникян
Ս. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

4856

Գ Ա Ն Ձ
№ 1219
ՊՐՈՖ. Լ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻ

08 AUG 2013

4179

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-ում СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

25481-60

Введенская типография, Загородный пр., 58.

Այժմ, երբ կոմմունա անուան տակ, ամբողջ Ռուսաստանը մի տեսակ նոր արտադրա-սպառողական ընկերութիւնների ցանցով է ծածկուում, երբ կազմակերպուում են քաղաքային — (օրինակ Պետերբուրգի Աշխատաւորական Կոմմունա) — և շրջանային կոմմունաներ՝ բնականաբար, ամեն մի գիւղացու ու բանուորի համար հարց է ծագում, ապա ի՞նչ բան է կոմմունան։

Մենք կուզենք գիւղացու և բանուորի հէնց այդ հարցին այստեղ պատասխանել։

Միջին դարերում Իտալիայում և Ֆրանսիայում կոմմունաներ էին կոչուում այն քաղաքները, որոնք այս կամ այն կերպ ձեռք էին բերել իրանց սինեօրներից (մեծ հողատէրեր՝ որոնք քաղաքական իշխանութիւնն էլ էին իրանց ձեռքում պահում) միանգամայն ինքնուրոյն, իրաւական, քաղաքական և ինչքային տանելի պայմաններ։

Կոմմունան — քաղաքային համայնք — իր երկրամասում ունէր և դատարանային իրաւունքներ և ինքնավարութիւն։

Քաղաքային կոմմունաների այդ ինքնուրոյնութիւնը սակայն՝ երկար չտևեց:

Ֆրանսայում քաղաքային կոմմունաներն իրանց անկախութիւնը երկար պահպանել չկարողացան այն պատճառով՝ որ կենդրոնական իշխանութիւնն աշխատում էր ամէն ինչ իր ձեռքում պահել, թագաւորներն իրանց վերահսկողութեանն էին ենթարկում ոչ միայն կոմմունաների դատարանները՝ այլ և նրանց տնտեսութիւնը, ու իրօք, 14-րդ դարում, ֆրանսական կոմմունաները փաստօրէն կորցրին իրանց ամբողջ ինքնուրոյնութիւնը:

Նոյնը տեղի ունեցաւ հէնց այդ շրջանում նաև Իտալիայում, կոմմունան, որպէս ինքնավար քաղաքական միութիւն՝ դադարեց գոյութիւն ունենալուց, իսկ նրա վերջնական լուծմանը նպաստեց այդ ժամանակներում հարուստների (այն ժամանակւայ իտալական ժողովրդի հասարակ, չունեւոր մասը հարուստներին անուանում էր «ճարպոտ ժողովուրդ» popolo grasso, իսկ աղքատներին՝ «լղար ժողովուրդ» popolo minuto) և աղքատների միջև մղւող քաղաքացիական կռիւը:

Մի քանի ճարպիկ ու ագրեցիկ դերդաստաններ, այդ կռիւը շահագործեցին յօգուտ իրանց դասակարգային շահերի, և 14-րդ դարու սկզբում՝ ամբողջ Իտալիայում ամրապնդւեց բռնապետական — միապետական կառավարչական ձև (սինեօրականութիւն):

Ահա թէ ինչ բաներ էին և ի՛նչ էին ներկայացնում իրանցից միջնադարեան կոմմունաները:

1789 — 1794 թւերին՝ կոմմունա էր կոչւում նաև Պարիզի քաղաքային դուման, վերջինս իր ծագումն

առաւ դեռ 1789-ի շարժման ժամանակ, երբ Նեկկերը հրաժարական տւեց և Բաստիլն ընկաւ: Պարիզի այս նոր քաղաքային խորհուրդը սակայն՝ ունեւոր դասակարգի կամքի արտայայտիչն ու նրա շահերի պաշտպանն էր հանդիսանում, օրինակ, այն ժամանակւայ քաղաքագլուխ Բայլեին կռիւ էր մղում բացառապէս չքաւոր տարրերի դէմ: 1791-ի յուլիսի 17-ին, նա՝ Մարսեան դաշտում՝ յանուն թագաւորին դահաղուրկ անելու և հանրապետութիւն յայտարարելու գաղափարներին, հրացանաղարկ անել տւեց քաղաքի չքաւոր ցուցարարներին:

Այնու ամենայնիւ՝ բռնապետութեան անկման օրերին՝ 1792-ի օգոստոսի 9-ի դիշերը, կազմակերպւեց մի յեղափոխական կոմմունա, բաղկացած Պարիզի 28 սեկցիաների ներկայացուցիչներից, որոնք հաւաքւելով քաղաքային խորհրդարան՝ իրանց յայտարարեցին որպէս այդ նորակազմ մարմնի օրինական ընտրեալներ: Յեղափոխական այս կոմմունան վճռական դեր խաղաց թագաւորին դահաղուրկ անելու գործում, միւս կողմից անընդհատ կերպով ճնշում գործ դնելով կոնվենտի վրայ՝ մղեց նրան դէպի յեղափոխական ուղին:

Այդ կոմմունայում գերիշխանութիւն ձեռք բերեց ֆրանսական յեղափոխութեան ամենավճռական տարը, եակոբինական կուսակցութիւնը: Նա ներկայացուցչական մարմնի հեղինակութիւնը ճանաչեց միմիայն այն ժամանակ՝ երբ փաստօրէն տեսաւ, թէ վերջնի ձեռք առած միջոցները և իր ձգտումներն իրօք իրար չեն ժխտում: Նա կազմակերպեց մայիսի 31-ի և յունիսի

2-ի ապստամբութիւնները, որոնք Ժիրոնդիստների կատարեալ անկումով վերջացան։

1793 թուի երկրորդ կիսին՝ կոմմունան մասնակցեց հակաքրիստոնէական պրոպագանդային, Պարիզում փակել տուեց բոլոր եկեղեցիներն և աշխատեց կրօնի փոխարէն բանականութեան պաշտամունքի դաղափարն իրականացնել։

Յեղափոխութեան պարտութիւնից յետոյ, Տերմիդորի 9-ին, կոմմունան քայքայման ենթարկուեց, յեղափոխութեան պարագլուխ Ռոբէսպիէրն ու քաղաքագլուխը գիլիոտինի վրայ հոդիներն աւանդեցին, իսկ կոմմունան ձեւականօրէն վերջ տուաւ իր դոյութեանը։

Սակայն մենք ամեն անդամ երբ կոմմունա բառն ենք լսում, մի բոլորովին ուրիշ բան ենք մտաբերում, յիշում ենք 1871-ի մարտի 18-ից մինչև մայիսի 28-ը դոյութիւն ունեցող Պարիզի Կոմմունան՝ որին Կարլ Մարքսը ապագայ «նոր հասարակութեան փառաւոր աղդարար» անունը տուեց, իսկ Ֆրիդրիխ Էնդելսն ասաց, թէ դա որպէս «բանւորների դերիշխանութեան» փորձ՝ պատմութեան մէջ առաջինն է։

Պրոլետարիատը հիմնելով Պարիզի Կոմմունան, նա առաջին անդամ պատմութեան մէջ ձեռնամուխ եղաւ պետական ընդհանուր, շինարար դործի։ Պարիզի Կոմմունան աշխարհի համար մի փաստացի օրինակ դարձաւ, թէ ինչպէս յաղթական պրոլետարիատը կարողանում է պետական ստեղծադործական աշխատանք կատարել։

Պարիզի հերոս կոմմունարները Ռուսաստանի այժմեան բանւորների անմիջական նախորդներն են՝ որոնք

նոյնպէս կարողացան պետական իշխանութիւնն իրանց ձեռքը վերցնել, այդ պատճառով էլ, ամէն մի դիտակից բանւոր, ամեն մի յեղափոխական մարդ, անհրաժեշտօրէն ծանօթանալու է, և պէտք է որ ծանօթանայ Պարիզի Կոմմունայի պատմութեան։

Պրուսսայի հետ ունեցած անյաջող պատերազմից յետոյ՝ Պարիզի բանւորները երկրի քաղաքական իշխանութիւնն իրանց ձեռքը վերցրին։ Ինքը Ֆրանսական ժողովուրդն այդ աւանտիւրային 'ի հարկէ, մասնակցել չէր ուզում, նա այդ խնդրում բացառապէս Նապոլէոն III-ի ցանկութեան և իշխանասիրական քաղաքականութեան զոհ դարձաւ։

Այդ պատերազմի ընթացքում ներքնապէս փտած ֆրանսական կայսրութիւնը կատարելապէս պարտուեց և տեղի տուաւ հանրապետութեան։

Սկզբում իշխանութեան գլուխ անցաւ բուրժուազիան։

Հին պետութեան օրէնսդրական մարմնի պատգամաւորները «ազդային ապահովութեան կառավարութեան» անուան տակ մի նոր օրգան կազմակերպեցին։

Այդ բուրժուական իշխանութիւնը, յանուն երկրի շահերի պաշտպանութեան՝ բոլոր զէնք կրելու ընդունակ պարիզցիներին դինելով ազդային գնդի շարքերը մտցրեց. բանից դուրս եկաւ, որ բանւորները դրանում մեծամասնութիւն էին կազմում։

Այդ հանդամանքը հարուստներին խիստ անհանդստացրեց. նոքա դինուած բանւորների մէջ իրանց տիրապետութեան համար լուրջ վտանդ տեսան։ Եւ իրօք, երբոր դերմանական զօրքերը Պարիզը պաշարեցին (հոկ-

տեմբերի 31-ին), ազգային գնդի բանւորական դումարտակներն օգտուելով հանգամանքից՝ ապստամբութեան դրօշ բարձրացրին իրանց կառավարութեան դէմ, թէև՝ վերջնիս՝ յաջողուեց իշխանութիւնն իր ձեռքում պահել, շնորհիւ դաւաճանութեան, տուած խոստման դրժման և մանր բուրժուազիայից կազմուած մի քանի բատալիոնների ցոյց տուած օգնութեան։

1871-ի յունուարի 28-ին, Պարիզն և նրա մարտկոցները թշնամու ձեռքն ընկան, որը քաղաքի բոլոր ամրութիւնները ոչնչացրեց մշտական զօրքի ձեռքից զէնքը խլելով՝ նրան պատերազմաղերի յայտարարեց, բայց նա չհամարձակուեց ձեռք տալ ազգային գնդին. վերջինս պահեց թէ իր զէնքերը և թէ թնդանօթները. շատ ճարտար կերպով ընդունելով թշնամու առաջարկած զինադադարը։ Բնական է որ, Պարիզը թշնամուն տալուց յետոյ, բուրժուական կառավարութեան միակ հոգսը լինէր բանւորներին զինաթափ անելը. նոր կառավարութեան գլուխ և բուրժուազիայի հնուտ գործավար Թիէրը գլխի ընկաւ, որ, բանւորների զինուած լինելը, ունեւորների, հողատէրերի և կապիտալիստների իշխանութեան համար ծանր կացութիւն է ստեղծելու,

Ֆրանսական բուրժուազիան փորձեց իր ատելի պրոլետարիատին զինաթափ անել. մարտի 16-ին Թիէրը հրամայեց կանոնաւոր զօրքերին, Մօնմարթրի բարձրութեան վրայ դտնուած ազգային գնդի թնդանօթները գրաւել, բայց զինւորները ոչ միայն չկատարեցին այդ հրամանը, այլ և եղբայրանալով նրանց հետ՝ ձերբա-

կալեցին Լէկոնթ և Տոմա գեներալներին, որոնց յետոյ ամբոխը գնդակահարեց։

Թիէրի կառավարութիւնը դրանից յետոյ Պարիզից Վերսայլ փախաւ և քաղաքն ամբողջապէս անցկացաւ ազգային գնդի կենդրոնական կոմիտէի ձեռքը, վերջինս իսկոյնևեթ նշանակեց Կոմմունայի Խորհրդի ընտրութիւնները։

Պարիզի բանւոր դասակարդն օժանդակութիւն ստացաւ թէ մանր՝ և թէ մասամբ նաև միջին բուրժուազիայից, բայց շատ անբաւական մնաց Ազգային Ժողովի բռնած դիրքից և նրա յետադիմական քաղաքականութիւնից, վերջինս փնռել էր իր ժողովատեղին տեղափոխել Բորդոյից Վերսայլ և ոչ՝ թ Պարիզ, միւս կողմից պաշարման միջոցին յայտարարուած մորատորիումի (պարտքերի փճարման դադարեցում) գործունէութիւնը դադարեցնել էր տուել։

Այդ միջոցը Պարիզի չունեւոր ազդաբնակութեան շահերին դդաւ, որովհետև պարտքերի փճարման դադարեցումը տարաժուում էր նաև բնակարանների վարձի վրայ, իսկ պատերազմից առաջացած անտեսական քայքայման ժամանակ, ժողովրդի չունեւոր խաւերի համար դա մեծ օժանդակութիւն էր։

Ազգային Ժողովը դադարեցնել էր տուել նաև զինւորների ռոճիկների փճարումը (օրական $1^1/_2$ ֆրանկ), իսկ այդ միջոցը Պարիզի պրոլետարիատի հացն էր կարում, աշխատանքի կատարեալ լացակայութեան պատճառով բանւորները ստիպուած էին եղել մանել ազգային գնդի շարքերը։

Կոմմունան համոզուած էր, և իրաւ, նա կարողացաւ իր շուրջը համախմբել Պարիզի ազդաբնակութեան

լայն խաւերը, այդ համախմբուողները կամ բանուորներ էին և կամ բանուոր դասակարգի կողմնակիցներ։

Կոմմունայի օրինակը ցոյց տուեց, որ ժամանակակից հասարակութեան ամենից աւելի հնչուած և միակ յեղափոխական դասակարգ բանուորութիւնն ընդունակ է՝ և կարող է բոլոր աշխատաւոր և շահագործուող մասսաներին իր դրօշակի տակ հաւաքել և կռուի հանել կապիտալի դէմ։

Ի հարկէ, եթէ բանուոր դասակարգի առաջադրած խնդիրների վրայ նայելու լինենք մեր ժամանակի լուսաբանութիւններով՝ ապա կտեսնենք՝ որ Կոմմունան շատ բան է աչքաթող արել, ի՛նչ որ, մեր կարծիքով, անթոյլատրելի էր։

Զէ՞ որ Կոմմունայում մեծամասնութիւնը պատկանում էր զգացմունքով ղեկավարուող սոցիալիստ — բլանկիստներին, ինտերնեկոներով առաջնորդուողներին և պրուդոնիստներին, իսկ վերջիններս՝ յայտնի էր որ քարոզում էին ո՛չ դիտական, այլ՝ դիւզայիական և արհեստաւորական սոցիալիզմ։

Բացի դրանից, Պարիզի բանուորների կառավարութիւն Կոմմունան, ստիպուած էր թշնամիների հետ ամբողջ ժամանակ գինուած և կառաղի կռիւ մղել, նա մի բոպէ անդամ հանգիստ չունեցաւ՝ որպէսզի կարողանար ամբողջապէս նուիրուել հասարակակարգի վերաշինութեան գործին։

Այնու ամենայնիւ նշանակալից են այն նորութիւնները, որ նա կարողացաւ կեանքում իրականացնել, նա դրեց այն հիմքերը՝ որոնց վրայ պիտի կառուցուի ապագայ նոր հասարակակարգը։

Կոմմունան բանուոր դասակարգի պետութիւն էր, որ իր էութեամբ, իշխանութեան նախկին ձեւերից և

կազմակերպելու եղանակներից՝ խիստ կերպով էր տարբերւում։ Պետութեան հին ձեւերը, փաստօրէն, իրա տեսակի զէնքեր էին՝ որոնցից օգտուելով հասարակութեան փոքրամասնութիւնը, ճնշում էր մեծամասնութեան։

Պարիզի կոմմունարներն իսկոյն հասկացան, որ՝ բանուոր դասակարգն ամեն ժամանակ կարող է իշխանութիւնը բուրժուազիայի ձեռքից խլել, բայց նա իր նպատակին հասնելու համար՝ չպէտք է այդ իշխանութեան հին մեխանիզմից օգտուի։ Նա նկատեց նոյնպէս, որ, եթէ պրոլետարիատը չի ուզում դրկուել դեռ նոր ձեռք բերած իր տիրապետութիւնից՝ ապա պիտի՝ առաջին իսկ բոպէից, ոչնչացնի հին մեխանիզմի այն բռնակալական ձեւը՝ որը դեռ մինչև վերջին բոպէին էլ իր դէմ էր ուղղուած, միւս կողմից, անհրաժեշտօրէն, պարտական է ինքն իրան ապահովել հենց իր ձեռքի տակ գտնուած ծառայողներից ու լիազօրներից, դրկելով նրանց, առանց բացառութեան՝ ամեն տեսակի կոչումից։

Հասարակութիւնը, պատմութեան ընթացքում, աշխատանքն ամենահասարակ կերպով բաժանելու եղանակով՝ ստեղծեց որոշ օրգաններ՝ որոնք սկսան նրա շահերին ծառայել։ Բայց ժամանակի ընթացքում, այդ օրգանները, իսկ նոցանից ամենից առաջ՝ պետական իշխանութիւնը իր մասնակի շահերին ծառայելն աւելի գերազանցելով, դուրս եկան հասարակութեան ծառայելու իրանց նախկին դերից և դարձան նրա բռնաւորները։

Այդ կերպի ձեւափոխութիւններ տեղի ունեցան այժմ գոյութիւն ունեցող բոլոր պետութիւններում, բայց Կոմմունան կարողացաւ դրանց դէմ կռուելու համար առաջադրել երկու անյաղթահարելի միջոց։

Նա վճռեց, որ ուսուցչական, դատաստանական և վարչական բոլոր պաշտօնները կարող են ձեռք բերել միմիայն ժողովրդական ընտրութիւնների միջոցով, իսկ ընտրութիւններին պիտի մասնակցին բացառապէս այն մարդիկ միայն՝ ովքերի որ շահագրգռում է այդ պաշտօնների արդարացի կատարումը, ընտրողներն իրաւունք ունին իրանց ընտրեալներին ամեն բոպէ պաշտօնից հեռացնել:

Երկրորդ, բոլոր ծառայողները ռոճիկ պէտք է ստանան, բայց ոչ աւելի՝ քան բանւորի աշխատավարձը: Ամենաբարձր ռոճիկը 6000 ֆրանկից չպէտք է անցնէր, այսպիսով կոմմունարները կարողացան մարդկանց կարիերիստական ցանկութեան վերջ դնել:

Հասկանալի է, որ բանւոր դասակարգը տնտեսական յարաբերութիւններն իր շահերին ծառայեցնելու համար պիտի շահագործէր քաղաքական իշխանութիւնը:

Կենդրոնական Խորհուրդն այդպէս էլ արաւ, 1870-ի հոկտեմբերից մինչև 1871-ի ապրիլ ամիսը, նա իր մի դեկրետով բնակարանավարձի վճարումները դադարեցրեց և մուրհակների մորատորիում հաստատեց, միւսով՝ վերջ տուեց փոխարինաբար պահ տուած իրերի վաճառմանը, իսկ գրաւ դրուածները յետ ստանալու համար երեքական տարի ժամանակամիջոց նշանակեց: Ապրիլի 27-ին արգելեց հացթուխների գիշերային աշխատանքները: Աւելի ուշ, բոլոր չշխատող գործարաններն ու արհեստանոցները—որոնք այն ժամանակ բաւականին շատ էին—բանւորական միութիւնների սեփականութիւն յայտարարեց:

Կոմմունան՝ պետութիւնն ու դպրոցը եկեղեցուց

բաժանեց, իսկ կրօնը յայտարարեց որպէս անկախ ու անհատական գործ:

Կոմմունան առաջինն է, որ գիտակցելով, թէ ինքը «համաշխարհային հասարակապետութեան դրօշակիրն է», ձգտեց փաստօրէն իրականացնել միջազգայնութեան առաջադրած սկզբունքները, նա հաստատեց վենդրացի Ֆրենկելի ընտրութիւնը, ընդունեց «համաշխարհային ռամկավարութեան անծնագոհ և նուիրուած զինուոր» լեհացի Դոմբրովսկուն որպէս գեներալի և հասարակական աշխատանքների մինիստրի պաշտօնն էլ յանձնեց մի գերմանացու:

Նա ոչնչացրեց Նապոլէոն 1-ի 'ի պատիւ իր տարած յաղթութիւնների կանգնացրած Վանդոմեան սիւն—արձանը, և ապացուցեց զրանով, որ յաղթական պրոլետարիատը դէպի պատերազմը միմիայն թթու արհամարհանք կարող է տածել:

Ժուրդ անունով մի հասարակ բանւոր Կոմմունայի Ֆինանսների մինիստրի պաշտօնն ստանձնեց և զարմանալի ընդունակութիւններ ցոյց տուեց այդ գործում:

Դժբախտաբար Կոմմունային չէր վիճակուած մինչև վերջը տանել իր մեծ գործը, հին աշխարհի ուժերի դէմ մղած անհաւասար կռուում նա ընկաւ:

Սկզբում, գօրքի բչութեան պատճառով, Պարիզի դէմ մղած կռիւը թոյլ կերպով էր տարւում, զինուորների մեծ մասը գերութեան մէջ էր, Պրուսական կառավարութիւնը սակայն, անսպասելի Տիէրի խնդրին, գերիների առաքումն արագացրեց, և որքան վերջինները շատանում էին՝ այնքան կռիւն աւելի կատաղի բնոյթ էր ստանում: Երկու ամսուայ անընդհատ ընդհարումներից

յետոյ՝ Վերսայլցիները յաղթեցին ու մայիսի 21-ին, շնորհիւ ազգային զնդի դաւաճանութեան և անփութութեան՝ կառավարական զօրքերը քաղաք մտան։

Ամբողջ մի շաբաթ Պարիզի փողոցներում անընդհատ կռիւ մղուեց. կոմմունարները պաշտպանւում էին կատաղի կերպով, և միմիայն մայիսի 28-ին յաջողուեց նրանց ընկճել վերջնականապէս։ Յաղթական բուրժուաները ցոյց աւին, թէ ինչպէս նոքա ընդունակ են իրանց յաղթահարած սարսուկներից վրէժ հանել, երբ վերջիններս կփորձեն երբևիցէ ծառանալ շահագործութեան դէմ. յաղթողների գոհերը տասնեակ հազարների հասան, զանազան պատիժների ենթարկուողների թիւը 30,000-ից անցկացաւ։

Բայց անհետացած Կոմմունան էլ էր շարունակում սարսափ ազդել իր թշնամիների վրայ, և 'ի զուր չէր, որ բոլոր երկրների բուրժուաները այնքան կեղտոտ կերպով էին բամբասում նրան։

Արդարացի էին շահագործողները — նոքա հասկանում էին, որ յաղթուած Կոմմունան՝ իրանց վտանգ է սպառնում, — Կարլ Մարքսն 'ի զուր չէր գրում, թէ, «Կոմմունայի սոցիալական մեծ արժէքը հէնց նրա գոյութեան փաստն է»։ Մարքսը Կոմմունայի Կենդրոնական Խորհրդի համար մի մանիֆեստ գրեց և հետևեալ մարգարէական խօսքերով վերջացրեց, որոնք, յետագայում կատարելապէս արդարացան։

«Բանուորների Պարիզն իր Կոմմունայով, որպէս նոր հասարակութեան փառաւոր ազդարար՝ միշտ պէտք է մեծարուի»։

Մենք տեսանք, ուրեմն, թէ ինչպէս պատմութեան

ընթացքում Կոմմունա բառն իր իմաստը փոփոխեց։ Պարիզի Կոմմունայից յետոյ, այդ բառը մի նոր նշանակութիւն ստացաւ, Կոմմունան այժմ պրոլետարիատի դասակարգային իդեալների իրականացման փորձ է նշանակում։

Ռուսաստանի բանուոր դասակարգն իր հերթին պետական իշխանութեան գլուխ անցնելով, բնականօրէն Պարիզի կոմմունարների մեծ գործի շարունակողը դարձաւ։ Այդ տեսակէտից՝ 1917 թ-ի հոկտեմբերեան յեղափոխութիւնը, պրոլետարիատի ազատագրական շարժման համաշխարհային պատմութեան մէջ մի վիթխարի քայլ է և մեծ տեղ է բռնում։

Ահա թէ ինչու Ռուսաստանի բանուոր դասակարգն իր ստեղծած պետական և հասարակական նոր հիմնարկութիւնների համար, միշտ, ֆրանսական պրոլետարիատի հերոսական կուսի շրջանից է անուններ փոխառնում։

Արևմտեան Եւրոպայի աշխատաւորների անցեալի՝ և մեր միջև, մի անձուկ ու անխզելի կապ կայ, որը, ամենն անդամ երևան է դալիս միևնոյն անունների յաջորդական գործածութեամբ, օրինակ, Պետերբուրգի բանուորները հետևելով Պարիզի կոմմունարների օրինակին՝ իրանց մայրաքաղաքն անուանեցին «Պետերբուրգի Աշխատաւորական Կոմմունա», իսկ հիւսիսային շրջանի կոմմունաների միութիւնը՝ «Հիւսիսային Կոմմունա»։

Ռուսաստանը մտաւ մի նոր ուղիի մէջ՝ որը նրան դէպի կոմմունիզմի յաղթանակն է տանում, նա ժամկետում է արտադրա-սպառողական կոմմունաների խիտ

ցանցով, այսինքն ապագայ նոր հասարակութեան փոքրիկ-փոքրիկ բջիջներով։

Ի հարկէ, մենք դեռ հեռու ենք իսկական, իդէալական կոմմունիզմից, այդ նպատակին հասնելու համար՝ Ռուսաստանն իր առաջին քայլերն է առնում այժմ, բայց «Կոմմունա» բառը, որով հասկացւում են ցարական կառավարութեան անարդ լուծը դէն շպրտող ռուս բանւորների ու գիւղացիների բոլոր կազմակերպութիւնները, մեր մէջ մի համոզում է առաջ բերում, թէ, կոմմունիզմի իդէալը շատ մեծ է և որ մեր փշոտ ու երկարին ճանապարհը միմիայն նա կարող է լուսաւորել։

Պէտք չէ մոռանալ նաև այն բազմաթիւ կոմմունաներն ու համայնքները, որոնք ընդհանուր պատմութեանն են յայտնի, և որոնք նոյնպէս հասարակական արտադրութիւնը միահամուռ ուժերով են կազմակերպելիս եղել, ունենալով իրանց շարքերում բացառապէս գիւղացիներ ու արհեստաւորներ։

Աղքատակութեան չքաւոր տարրերը շատ անգամ են միացել ու կազմել համայնքներ ու ընկերութիւններ, որպէսզի կարողանան ընդհանուր աշխատանքով մի կերպ բաւարարութիւն տալ իրանց պահանջներին։

Այդ տիպի համայնքներ, 19-րդ դարի ընթացքում, մեծ թւով երևան էին գալիս Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Պետութիւններում։

Հիմա լսենք, թէ ինչ էր ասում Օդիս նահանգում գոյութիւն ունեցող կոմմունիստական Զոհար համայնքի մի ներկայացուցիչը։

«Կոմմունայի տուած օգուտները բազմաթիւ և մեծ են, ամենից առաջ այդտեղ չկան ոչ հարուստներ՝ և

ոչ էլ աղքատներ, համայնքի բոլոր անդամները միմիայն հոգևոր դաստիարակութեան մասին են մտածում, ուրիշ հոգս չունեն։

Կոմմունան միակերպ է նայում թէ հիւանդների, թէ թոյլերի և թէ չունևորների վրայ, այս հանգամանքն այդ դժբախտների ցաւերն զգալի կերպով թեթևացնում և կեանքն էլ հաճելի է դարձնում։ Զրից, կրակից և այլ պատճառներից առաջացած աղէտներն առհասարակ, ջոկ-ջոկ անհատների վրայ խիստ կերպով են ազդում, բայց նոքա չեն ազդում մարդկանց վրայ այնպէս խոր կերպով՝ երբ աղէտին ենթարկւում են համայնքի բոլոր անդամները միասին։

Քրիստոնէական ներողամտութիւնն ու փոխադարձ ճշմարիտ սէրը, որ այդ վարդապետութեան հիմունքն են կազմում՝ գործնական կեանքում, աւելի հեշտութեամբ կոմմունիստական համայնքում կարող են իրականանալ, քան թէ որևիցէ այլ միջավայրում, մեկուսացած առանձին անհատների միջև։

Միւս կողմից, ինչքիս այն հանգամանքի, որ կոմմունիստները մշտապէս կողմնակի ընկերների դիտողութեան են ենթարկւում՝ հեշտութեամբ են կարողանում արմատախիլ անել իրանց եսասիրութիւնը, յամառութիւնը, վատ սովորութիւններն ու ախտերը։

Բայց երբէք չպէտք է աչքաթող անել դրանց և ռուս գիւղացիների ու բանւորների կազմած կոմմունաների միջև տեղի ունեցած կարևորագոյն զանազանութիւնները, առաջինները մասնաւոր անտեսութիւն ունեցող միջավայրերում են երևան գալիս, իսկ երկրորդները՝ հասարակական։

25481-60
ՀՍՍՀ-ՍՍՌ Ա. Մ. Գ. Մասիսյան անվ.

Առաջինները բանուորների, դիւղացիների և արհեստաւորների խմբակներն են՝ որոնք ուզելով փրկուել կապիտալիզմի յանցաւոր և թշուառ աշխարհից, գնում են դաշտերն և կազմակերպում են այնտեղ իրանց համար համայնքներ, այն յուսով 'ի հարկէ՝ որ փողային թագաւորութեան կործանարար ազդեցութիւնն իրանց չի հասնի. բայց դժբախտաբար, հէնց այդ հանդամանքն էլ կոմմունիստական այս տիպի համայնքներին անխուսափելիօրէն կորուստի է մատնում:

Աւգուստ Բէբէլն իր Շարլ-Ֆուրիէին նուիրած աշխատանքում դեղեցիկ կերպով է պարզում այդ տիպի փորձերի անյաջողութեան պատմական պատճառները:

«Այն բոլոր սոցիալիստական փորձերը, — ասում է նա, — որոնք բուրժուական հասարակակարգերում են հանդէս գալիս և իրանց նպատակն է հաշտեցնել միմեանց ժխտող հակասութիւնները՝ պիտի անհրաժեշտօրէն կորուստի մատնուին, և եթէ կան վայրեր, որտեղ դոքա կարողանում են իրանց գոյութիւնը բաւականին երկար պահպանել, ինչպէս օրինակ՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ — Պետութիւններում կոմմունիստներից կազմակերպուած համայնքները՝ ապա դա շատ հասկանալի է, այդ կոմմունաները բոլորովին կտրուած են մնացած աշխարհից, և ունին տնտեսութեան այնպիսի ձև՝ որտեղ անդամներից պահանջւում է նահապետական յարաբերութիւններ և սպարտական պարզութիւն:

«Այդպիսի կոմմունան ոչ մի կապ չունի այն ծաղկած կուլտուրայի հետ՝ որին ձգտում է մարդկութիւնը: Նրան հասնելու համար անհրաժեշտ է մարդկային բոլոր տուեալների, ընդունակութիւնների ազատ անարգել զարգացում և կուլտուրական բարիքների լայն օգտագործում, իսկ այդ դրութիւնը հնարաւոր կլինի միայն այն ժամանակ՝ երբ բոլոր կուլտուրական միջոցները հասնեն գիտական և տեխնիկական զարգացման բարձր աստիճանի: Իր ուժերով ու միջոցներով սահմանափակ, մեկուսացած, ոչնչութիւն կազմող համայնքն որքան էլ որ աշխատի արհեստականօրէն կազմակերպուել՝ այդ բանը չի կարող անել: Դրսից եկած ամեն մի կողմնակի ազդեցութիւն կարող է նրան քար ու քանդ անել, և նայած թէ այդպիսի համայնքում որքան են ուժեղ այն պայմանները, որոնց պատճառով մի անհատ ամբոյչի համար անհրաժեշտութիւն կհամարի՝ ապա այնքան քար ու քանդ լինելու վտանգն անխուսափելի է:

Ուրեմն նրանց համար անհրաժեշտօրէն երկու ելք կայ, կամ պէտք է գնան ամբոյչի հետ և միասին զարգացման օրէնքներին ենթարկուեն՝ և կամ մեկուսանան ու քարանան:

«Այդ պատճառով էլ, բոլոր սոցիալիստական փորձերը, որոնք արուում են բուրժուական կարգերում՝ անիրագործելի մտքեր և ցնդաբանութիւններ են, 'ի հարկէ, անկախ այն հանդամանքից, թէ ով է անում այդ բանը, առանձին անհատը, որ երևակայում է, թէ, լինելով բուրժուա գործարանատէր, կարող է սոցիալիստական հիմքերով արտադրել և սպառել, թէ մի փոքրիկ համայնք՝ որ ցանկանում է իր միջոցներով և իր համար նոյն նպատակին հասնել: Բոլոր այդ փորձերը մարդկանց մտաւոր տհասութեան արդիւնք են՝ և մի հեռանքի միայն կարող են հասցնել, նոքա առաջ կը բերեն յուսախաբութիւն՝ որը չկազմակերպուած մարդկանց աչքում

մեր իդեաների վարկը կդցի, իսկ հակառակորդների ձեռքին էլ զենք կտայ՝ որոնք չեն մոռանայ 'ի հարկին դարձնել այդ զենքերը իրանց համար սարսափելի այդ էկսպերիմենտների դեմ»:

Բոլորովին այլ տիպի են այն կոմմունաները՝ որ ձգտում են իրականացնել ռուս բանուորներն ու գիւղացիները: Նրանք ցանկանում են Ռուսաստանի Խորհրդային Հանրապետութիւնը վերածել համառուսական մի մեծ կոմմունայի, մի կուռ ամբողջութեան՝ որտեղ ինքը, հասարակութիւնը, կարողանայ յօգուտ իր բոլոր անդամների, կարգի բերել բոլոր անհրաժեշտ առարկաների արտադրութիւնը, և որտեղ հնարաւոր լինի արտադրուած բոլոր պիտոյքները հաւասարապէս բաժանել հասարակութեան բոլոր անդամների միջև:

Նախկին կոմմունաները մասնաւոր տնտեսութեան շրջաններում էին երևան գալիս. նոքա կապիտալիստական տնտեսութեան օրգանիզմում օտարոտի գոյացութիւններ էին, որոնք կանգնելով այլ հիմունքների վրայ՝ բնականօրէն, հին աշխարհի գերազանց ուժերի հետ մղած կռուում՝ յաղթութիւն տանելու յոյս չպէտք է ունենային:

Կոմմունիստական համայնքների հիմնադիրներն ուզում էին պատմութեան օրէնքներին չենթարկուել, նրանք քաղաքական իշխանութիւնը ձեռք բերելու մասին՝ խօսք անգամ չէին անում, այլ ուզում էին, խաղաղ կերպով, օրինակ հանդիսանալ ուրիշներին՝ և վերստեղծել կեանքը: Բայց հին աշխարհն իր հարստութեամբ չափազանց հուժկու էր, նման կոմմունաները, որոնք ուզում էին անտես

առնել պատմութեան ցոյց տուած ուղին, ոչ մի արդիւնքի չպէտք է հասցնէին, և հին աշխարհը յաղթեց նրանց:

Հին աշխարհի սրտում նոր հասարակութեան հիմքեր դնելու փորձերն անյաջողութեան մատնուեցին այն պատճառով՝ որ այդ ուղիով գնացող կոմմունաները, իշխանութիւնը թողնում էին կեանքի հին տէր ու տիրականների ձեռքին, սակայն կեանքն ինքն ապացուցեց, որ՝ գործելակերպով ուրիշին վարակելով, աստիճանական առաջ խաղացումով, բարենորոգումներով և խաղաղ ճանապարհով հասարակակարգի ձևերը փոխելու փորձերն ապարդիւն են:

Քաղաքական իշխանութիւնը ձեռք բերելու խնդիրը երբէք չէր կարելի աչքաթող անել, նա նոյն հասարակութեան ազդարարների առջև իր ահաւոր մեծութեամբ կանգնեց:

Հէնց այդ պատճառով էլ, Ռուսաստանի պրոլետարիատը, նախօրօք այդ հարցը վճռեց, նա իր դասակարգային հակառակորդների ձեռքից խլեց քաղաքական իշխանութիւնը, և այժմ, նոր միայն ձեռնամուխ է լինում վերստեղծելու տնտեսական կեանքը, աշխատելով, 'ի հարկէ, միանգամայն նոր հիմունքների վրայ դնել նրան:

Այդ է պատճառը, որ աշխատաւորները կեանքի նոր ձևերն ստեղծելիս, իրանց բանուորական պետութեան կողմից, ստանում են ամէն տեսակի օժանդակութիւն և օգնութիւն:

1871 թ-ի Պարիզեան Կոմմունան, որպէս նոր պետութեան ձև՝ իրա տեսակում առաջինն էր, դրանում է կայանում նրա պատմական նշանակութիւնը, բայց այդ պետութեան սահմանները Պարիզ քաղաքից դէնը

չէին անցկենում և այդ պատճառով էլ, նա, շուտով անկման ենթարկուեց, այն ինչ 1917 — 1918 թուի կոմմունան լինելով հանդերձ նոյն ձևի պետութիւն՝ տարածուել է արդէն ամբողջ երկրում, և հէնց այդ հանգամանքը նրա յաղթութեան ու տոկունութեան գրաւականն է։

Պրոլետարական պետութիւնն իր ամբողջ ծանրութեամբ՝ կեանքի տէր դարձած բանուորների ու գիւղացիների կողմն է պահում, իսկ երկիրը հսկայական թափով առաջ է գնում, և մի գեղեցիկ օր, նա անշուշտ վերածուելու է մի հսկայական կոմմունայի։

Աշխատաւորները Ռուսաստանի կոմմունաներում քաղաքական իշխանութիւնն իրանց ձեռքն են վերցրել, նոքա այժմ ուզում են արտադրութիւնն էլ իրանց ենթարկել, Խորհրդների Հանրապետութիւնը, դա հէնց կոմմունաների դաշնակցութիւնն է, որտեղ իշխողները չքաւորներն են և որտեղ չունեւորներն են կեանքի տէրը։

Կոմմունա ասելով՝ հասկանում ենք կապիտալ չունեցողների իշխանութիւն, հասարակութեան ստորին խաւերի, կեղեքւած և ճնշւած տարրերի տիրապետութիւն. դա մի կազմակերպութիւն է՝ որ ամեն ինչ յօգուտ հասարակութեան բոլոր անդամների է արտադրում. դա արտադրւած պիտոյքների հաւասարաչափ կերպով բաժանելու գաղափարի մարմնացումն է, համաձայն մի սկզբունքի՝ որ ասում է, «տուր ամեն մէկին իրա պահանջների համաձայն և պահանջիր ամեն մէկից նրա ընդունակութիւնների չափով»։

Ահա թէ ի՞նչ բան է կոմմունան։

„ՀԻՍՈՒՍԱՑԻՆ ԿՈՄՄՈՒՆԱՑ"-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

1) Վատին. — Ի՞նչ բան է կոմմունան: Գինն է 60 կ.

Տպագրութեան է յանձնուած առանձին պրակներով «Սոցիալիզմի Պատմութիւնը», հեղինակութիւն Կաուցկու և ուրիշների:

ՀԱՅ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
Им. А. Мясникян
Ս. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.

ՀՀ Ազգային գրադարան
NL 0194001

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՈՍԿԻԱՑՈՒՄ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1. Ռուս. Սոց. Փեդ. Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրութիւնը։
2. Ն. Լենին. — Նամակ Ամերիկեան Բանուորներին։ Գինն է. 1 ր.
3. Վ. Փրիչ. — Պրոլետարական պսակդիան։ Գինն է. 2 ր.
4. Ներսէսակ. — Դէպքերը Բաքուում (Հայ Յեղ. Դաշնակցութիւնը և Բաքուի Խորհրդային Ըշխանութիւնը)։ Գինն է 75 կոպ.
5. Զիլերին. — Որեսթից լեռում (Հեկուցում Խորհուրդների 5-րդ համագումարին)։ Գինն է. 1 ր.
6. Ն. Լենին. — Կարլ Մարքս (Համառօտ կենսագրութիւնը և մարքսիզմի շարադրութիւնը)։ Գ. 1 ր. 50 կ.
7. Ներսէսակ. — Ռուսաստանի Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան։ Գինն է. 1 ր.
8. Կարլ Ռադեկ. — I. Կոմմունիստական Կուսակցութիւնը Գերմանիայում, II. Կարլ Լիբկնեխտ (Լիբկնեխտի նկարով)։ Գինն է. 1 ր.
9. Խորհրդային Կառավարութեան նոտան Վիլսընին։ Գինն է. 75 կոպ.
10. Մ. Պաւլովիչ (Վելտման). — Սօխան և իր դերը համաշխարհային պատերազմի մէջ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏԻ ՊԵՏԵՐԲՈՒԳԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

„ՀԻԴՍԻԴՍԱՑԻՆ ԿՈՄՄՈՒՆԱՑ՝՝-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

Լ. Վատին։ — Մեր բան է կամուրան։ Գինն է. 60 կ։

Ցպագրութեան է յանձնուած առանձին պրակներով Սոցիալիզմի Պատմութիւնը, Հեղինակութիւն Կաուցկու — և ուրիշների։